ՀԱՆՐԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏ

• Մինչև 2030թ-ը թարմացնել ավտոբուսային շարժակազմը՝ ներդնելով էլեկտրական ավտոբուսներ, որոնք վերազինված կլինեն ներառական վերելակներով

• Բարելավել ներքաղաքային տրանսպորտի աշխատաժամերը՝ դարձնելով 07:00-22:00-ն (որպես տուրիստական քաղաք՝ ժամանակի ընթացքում՝ մինչև 24:00-ն)

• Բարձրացնել վարորդների սպասարկման մակարդակը՝ արտահագուստից մինչև հաղորդակցման մակարդակի բարելավում

• Համաքաղաքային բոլոր երթուղիները սպասարկող ամբողջ շարժակազմը կահավորել տեսախցիկներով՝ապահովելով ուղևորների անվտանգությունը

• Լուրջ վերահսկողություն սահմանել մեքենաների մաքրության ու հիգիենայի խնդիրների վրա

• Մշակել և կիրառելի դարձնել ներքաղաքային տրանսպորտային օնլայն հավելված, որը կհեշտացնի քաղաքի բնակիչների և զբոսաշրջիկների տեղաշարժը դեպի քաղաքի բոլոր հատվածներ /ներառյալ ծայրամասերը/

• Վերահսկել ուղևորների սահմանված քանակի թույլատրելիության հարցը

• Տեղադրել ու կահավորել նոր ու ժամանակակից սմարթ (խելացի) կանգառներ՝ հագեցած արևային պանելով, հեռախոսների լիցքավորման հնարավորությամբ, Wi-Fi-ով և տեղեկատվական երկլեզու մոնիտորով, որը կհաղորդի տվյալ երթուղին սպասարկող ավտոբուսների, միկրոավտոբուսների չվացուցակը և այլ մանրամասներ

ՓՈՂՈՑԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

• Բացի պատմական միջուկի փողոցաշինությունից՝
այլընտրանքային տարբերակով հասնել քաղաքի
ծայրամասային և անգամ բակային փողոցների բարելավմանը
(ասֆալտապատման և այլ տարբերակներով)

• Փողոցների անվանումներով երկլեզու ցուցանակներ տեղադրել

• Բարելավել փողոցային լուսավորության ցանցը՝ ամբողջովին
անցնել էներգախնայող լեդ և արևային լուսավորության

• Վերանորոգել / բացակայության պարագայում կառուցել / համայնքի թաղամասային ջրահեռացման համակարգերն ու սելավատարները

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

• Ստեղծել քաղաքի բրենդը՝ ձևավորելով զբոսաշրջային իմիջ

• Անի և Մուշ, Ավստրիական և Բուլվարային թաղամասերը
դարձնել առավել գրավիչ և հրապուրիչ զբոսաշրջիկների համար՝
ստեղծելով նոր ու հետաքրքիր զբոսաշրջային կանգառներ

• Անի թաղամասը բարեկարգել և գունավորել շենքերը

• Զբոսաշրջային ակտիվությունը կենտրոնից տարածել դեպի
ամբողջ քաղաքն ու ծայրամասերը: Այդ նպատակով ձեռք բերել
բացօթյա զբոսաշրջային ավտոբուսներ /tourist bus/, որոնցով
քաղաքային տուրեր կիրականացվեն՝ ներկայացնելով քաղաքի
բոլոր շերտերը՝ Ալեքսանդրապոլը, Լենինականն ու Գյումրին

• Վերջապես հանրային զուգարաններ կառուցել՝
օգտվելով միջազգային փորձի օրինակներից

• Գյումրու կենտրոնից հեռու ստեղծել զբոսաշրջիկներին
սպասարկող ավտոբուսների ու միկրոավտոբուսների համար
ավտոկայանատեղի՝ բեռնաթափելով կենտրոնը: Ավտոկայանատեղին իրենից
ենթադրում է մեկ ամբողջական ենթակառուցվածք՝ իր այլ
ծառայություններով՝ ավտոլվացում, սպասարկում, սրճարաններ

• Ներդնել թանգարանների տոմսերի վաճառքի նոր մոդել, որը
կչեզոքացնի սեզոնայնության խնդիրը և կապահովի էլ ավելի

մեծ շարժ քաղաքի թանգարանային տնտեսության մեջ
• Ձգտել՝ ապագայում ունենալ փառատոնային օրացույց՝ 12 ամսվա համար (որպեսզի զբոսաշրջային հոսքերը քաղաքում 3-4 ամիս չտևեն): Օրինակ՝ հիմնել Ալեքսանդրապոլյան ոչ առավել հայտնի ուտեստների գաստրո փառատոն, որն էլ կդառնա այցեքարտային
• Զբոսաշրջային տեղական տուրքի սահմանում, որը կծառայի բացառապես քաղաքում զբոսաշրջային նոր առաջարկներ ստեղծելուն
• Ալեքսանդրապոլյան արհեստների և արվեստների փոքրիկ տաղավարներով ճեմափողոցի ստեղծում
• Կինոների բակի բարեկարգում
• Գյումրու պատշգամբներում և բակերում նկարահանված ֆիլմերի հայտնի էպիզոդները կենդանացնել՝ նույն վայրերում տեղադրելով համապատասխան մանեկեններ և հնչեցնելով հայտնի տեսարանների ձայնագրությունները
• Go to Gyumri հավելվածի ստեղծում, որը կմեկտեղի քաղաքի զբոսաշրջային բոլոր ծառայություններն ու տեղեկատվությունը, ինչը կծառայի նաև որպես օնլայն ինֆոկենտրոն
• Համագործակցել հայրենական և միջազգային կինոարտադրողների հետ՝ Գյումրին դարձնելով վաղեմի ֆիլմարտադրության «տաղավար»
• Գյումրին հռչակել հումորի մայրաքաղաք
• Համայնքապետարանում բացել զբոսաշրջության զարգացման բաժին

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

• Մուշում կառուցել հարթակ իր անհրաժեշտ ենթակառուցվածքներով՝ համերգների, քարոզարշավների, մշակութային հանդիպումների համար՝ բեռնաթափելով կենտրոնը

• Մուշում կառուցել ատրակցիոնների մեծ պարկ/ հայտնի Disneyland-ի օրինակով/
• Կատարել քաղաքաշինական ոլորտում առկա խնդիրների գույքագրում և դրանց լուծման առաջնահերթությունների սահմանում
• Քաղաքաշինական գործունեության իրականացումն ապահովել գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան
• Փաստաթղթաշրջանառության հասանելիություն՝ էլեկտրոնային համակարգի ներդրում միջազգային փորձով
• Բնակարանային ապահովման խնդրի լուծման նպատակով աջակցել, ակտիվացնել, խրախուսել և զարգացնել եկամտահարկի վերադարձի ծրագրով վարկային միջոցների ներգրավմամբ բնակարանային շինարարություն
• Վերնանցումներ կառուցել Տերյան փողոցում և Երևանյան խճուղում
• Բացօթյա սրճարանի մոդելով վերնանցում կառուցել Սայաթ-Նովա փողոցում (Թատերական հրապարակի հարակից վայրում)
• Մուշ և Բուլվարային թաղամասերում կառուցել ժամանակակից մանկապարտեզներ
• Գետնանցումների բարեկարգում ՝ շահեկան պայմաններով գործարար միջավայրին տրամադրելու պայմաններով
• Քաղաքում ստեղծել էսթետ կանաչ գոտիներ
• Նպաստել և խրախուսել թեքահարթակների կառուցումը քաղաքում գործող հասարակական, մշակութային և քաղ. ծառայություններ մատուցող կազմակերպություններում
• Համատիրությունների ինստիտուտի խորքային հետազոտությունից հետո առաջարկել նոր մոդել /առաջիկա 6 ամսվա ընթացքում/
• Կառուցել նոր բակային խաղահրապարակներ՝ առաջնահերթություն տալով ծայրամասերին և լքված

թաղամասերին

• Իրականացնել սոցիալական բնակարանաշինության ծրագրեր

• 30-35 տարեկան մաշված կիսակառույցների համալիր ծրագիր իրականացնել

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԴԻՄԱԳԻԾԸ

• Քաղաքի գլխավոր հատակագծի վերջնական հաստատում

• Գյումրի մտնող բոլոր մուտքերում քաղաքի խորհրդանշական ճարտարապետական կոմպոզիցիաների կառուցում

• Առանձնակի խնամքի և հոգածության ցուցաբերում Կումայրի արգելոց-թանգարանի տարածքին, շենք-շինություններին

• Գերեզմանոցների աշխատանքի կանոնակարգում, հողհատկացումների վերահսկողություն և այլ խնդիրների լուծում

ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔ

• «Արցախ» թաղամասի կիսակառույց մարզահամալիրի կառուցում

• Բակային ֆուտբոլի, բասկետբոլի մարզադաշտերի կառուցում

• Գյումրիում հայտնի և ուժեղ մարզաձևերի ամենամյա մրցաշարերի կազմակերպում

• Բոլոր մարզաձևերի խրախուսման համար «Գյումրու գավաթ» կամ «Քաղաքապետի գավաթ» ամենամյա մրցաշարի իրականացում

• Առանձնակի հոգածության դրսևորում մարզական կառույցների նկատմամբ

• Գրադարանների արդիականացում՝ մեծ ընթերցասրահով և համագործակցությունների նոր առաջարկով

• Խրախուսում թատերական փառատոնների անցկացմանը

ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ

• Համայնքի բաց և թափանցիկ կառավարման քաղաքականության որդեգրում
• Համայնքապետի և բաժինների վեցամսյա հաշվետվության պրակտիկայի կիրառում
• Համայնքապետի մեծամասշտաբ ասուլիսների պրակտիկայի հաճախակի իրականացում
• Հանրային լսումների պարբերաբար իրականացում
• Քաղաքացիների ամենշաբաթյա ընդունելություն

ԿԱՆԱՉ ԵՎ ԿԱՅՈՒՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

• Կրթություն և իրազեկում
• Արևային կայանների ստեղծում
• Վերականգնվող էներգիայի քաղաքականության վարում համայնքում
• Թափոնների կառավարում
• Գյումրու շուրջ բուֆերային նշանակության կանաչ տարածքների ստեղծում

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ

• Հայագիտական և ազգագրական երիտասարդական ամենամյա համաժողովի կազմակերպում
• Տեխնոլոգիական ամենամյա համաժողովի կազմակերպում
• Մանկապարտեզներում դայակի օգնականի հաստիքների տրամադրում
• Համայնքի մանկապարտեզների բարելավում

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ

• Գյումրիում բնակություն հաստատած արցախցի մեր հայրենակիցների համար ստեղծել բարենպաստ պայմաններ՝ քաղաքում կայանալու, իրացվելու, աշխատանքային և ստեղծագործական գործունեություն իրականացնելու համար
• Տարածք տրամադրել գյուղական շուկայի ստեղծման համար /բոլոր մարզերի ներկայացվածությունն ապահովելով/
• Սպասարկման ոլորտի ծառայությունների որակը բարելավելու ուղղությամբ կազմակերպել ամենամյա համաժողով

ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

• Աղբատար, աղբահանող, սպասարկող մեքենաների համալրում
• Ստորգետնյա աղբամանների պրակտիկայի կիրառում
• Կենցաղային աղբի տեսակավորման և վերամշակման պրակտիկայի ներդրում
• Թափառող շների համար ապաստարանների կառուցում՝ ապահովելով վերջիններիս խնամքն ու հոգածությունը
• Սևերսկի թաղամասում սուբվենցիոն ծրագրով կոյուղատար համակարգի կառուցում
• Գործուն միջոցների ձեռնարկում՝ դաշտամկների դեմ պայքարի առնչությամբ

ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ ԿԻՑ ՍՏԵՂԾԵԼ

• Ավագների խորհուրդ
• Գործարարների խորհուրդ
• Մշակութային գործիչների խորհուրդ
• Ճարտարապետների խորհուրդ
• Զբոսաշրջության զարգացմամբ զբաղվողների խորհուրդ
• Հասարակական

կազմակերպությունների խորհուրդ

• Սփյուռքի հետ կապերի խորհուրդ

• Երիտասարդական խորհուրդ

• Մենաշնորհներից ու դրանց ազդեցության գոտուց բնակիչների պաշտպանության խորհուրդ